ԿՈՉ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Մեր հայրենի աշխարհի հիւսիս-արևմտեան շրջանի ամսոյս 7-ին պատահած ահաւոր երկրաշարժի պատճառած աղէտին առիթով, մենք՝ Վազգէն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց և Գարեգին Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, 14 Դեկտեմբերէն 20 Դեկտեմբեր եղանք ի Ս. Էջմիածին, միատեղ աղօթեցինք երկրաշարժին զոհուած տասնեակ հազարներով մեր ժողովուրդի զաւակներուն հոգիներու խաղաղութեան համար, այցելեցինք երկրաշարժէն զարնուած շրջանները, սգացինք կորուստը մահացեալներուն, բաժնեցինք ցաւն ու վիշտը վերապրողներուն և ունեցանք լայն խորհրդակցութիւններ աղէտի դարմանումին և մեր ժողովուրդի վերականգնումին, քանդուած շրջաններու վերաշինութեան և առհասարակ այս աղէտին յաղթահարելու մեր պարտաւորութեանց այլազան երեսներուն և ընելիքներուն մասին:

Առաջին հերթին, սրտի պարտք համարեցինք հայրական մեր խօսքը սոյն կոչով միասնաբար ուղղելու մեր ժողովուրդի զաւակներուն ի Մայր Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

ա. Այս ահաւոր աղէտին դիմաց, մեր ցաւը մեղմացած կը զգանք ի տես այն միահամուռ, ու անվերապահ սիրոյն և միասնութեան ոգիին, զոր համայն մեր ժողովուրդը Հայաստանի թէ սփիւռքի մէջ՝ մէկ սիրտ, մէկ հոգի, անմիջապէս լծուեցան դարմանումի և օժանդակութեան գործնական աշխատանքի: Հայրական անհուն սիրով կ՚ողջունենք այս հրաշալի և գովելի

կեցուածքը և կ՚աղօթենք ու կը յորդորենք, որ նոյն ուղիով ե նոյն յարաճուն ընթացքով շարունակէ ան իր բարիքը բերել մեր ժողովուրդի վերականգնումի նուիրական առաքելութեան:

բ. Գնահատանքի և շնորհակալութեան բարձր աստիճանով կ՚ողջունենք խորհրդային կեդրոնական իշխանութեան վերին մարմիններուն, բոլոր եղբայրական ազգութիւններուն, Խորհրդային Միութեան բանակին և բարեսիրական կազմակերպութեանց և ամբողջ ժողովուրդին յայտնաբերած գործակցութեան ե հոգածութեան սքանչելի ոգին, որով հայ ժողովուրդին կրած ցաւը ընդունեցին սրտի իրենց սեփական ցաւը և ըրին ու կը շարունակեն ընել իրենց գերագոյն կարելին աղէտը դարմանելու ե մեր ժողովուրդին կեանքը վերստին իր ստեղծագործական շինարար հունին մէջ դնելու համար:

գ. Գնահատանքի և շնորհակալութեան մեր խօսքը կ՚ուղղենք յատկապէս Խորհրդային Հայաստանի պետական իշխանութեան, որ իր բոլոր միջոցներով և համայն ժողովուրդով, ոգի ի բոին լծուեցաւ փրկութեան գործին, իր բոլոր ուժերը սևեռած ըլլալով հիմնական ու կենսական գործին:

դ. Մեզի և ամբողջ հայ ժողովուրդին համար մխիթարութիւն և հոգեկան զօրացումի աղբիւր մը եղաւ, համաշխարհային չափանիշով այնքան մեծ թիւով ազգերու, պետութիւններու, եկեղեցիներու, բարեսիրական հաստատութիւններու և մարդասիրական կազմակերպութիւններու արտայայտած աննախընթացօրէն լայնածիր բարերար աջակցութիւնը, որ այնքան լայն արձագանգ գտաւ ողջ աշխարհի մամուլին մէջ:

ե. Այս տխուր, բայց վճռական պահուն, բեկեալ սրտով մեր հայրական խօսքը կը բերենք սգաւոր համայն հայ ժողովուրդին, յայտնելու համար մեր խոր վիշտը և հոգեկան տառապանքը իբրև հետևանք 7 Դեկտեմբերի ահաւոր երկրաշարժի: Գրեթէ ամբողջապէս քանդուած են Լենինական, Սպիտակ, Կիրովական և Ստեփանավան քաղաքները և բազմաթիւ գիւղեր ու աւաններ: Կան շուրջ վաթսուն հազար մեռեալներ, հազարաւոր վիրաւորներ ու անօթևան մնացած հարիւր հազարաւոր բնակիչներ:

Մեր մեծ վշտի այս ժամուն մենք կ՚աղօթենք զոհեալներու հոգիներու խաղաղութեան և Սուրբ Հոգւոյ մխիթարութիւնը կը հայցենք բոլոր սգակիր ընտանիքներուն:

Կոչ կ՚ուղղենք մեր հարազատ ժողովուրդի զաւակներուն՝

1. Հոգևոր արիութեամբ ու ազգային համախմբուածութեամբ՝ մէկ սիրտ, մէկ կամք դարձած, կազմակերպուած ու ծրագրուած ձևով իրենց աշխատանքի և զոհողութեան բաժինը շարունակեն բերել, ամոքելու տառապանքը իրենց աղէտեալ ազգակիցներուն, մխիթարելու զանոնք հոգատար վերաբերումով և ապա նպաստելու առատաբաշխ ձեռքերով, կործանած քաղաքներու և շէներու վերակառուցման գործին:

2. Մենք այս նպատակաւ անհրաժեշտ գործնական առաջադրանքները և յորդորները պիտի ուղղենք մեր եկեղեցական կեդրոններուն և համայնքներուն:

3. Կարևոր կը նկատենք, որ համազգային հանգանակութեան գործը կատարուի լիակատար միասնութեամբ, և հանգանակուած գումարները տրամադրուին նախօրոք ճշդուած ու ծրագրուած նպատակներու, որպէսզի լաւագոյնս ծառայեն բուն կարիքներուն, համախորհուրդ հայրենի իշխանութեանց հետ:

4. Կոչ կ'ուղղենք մեր հարազատ ժողովուրդին որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, որ բոլորը անխտիր, աղետեալներուն օգնելու և քանդուած քաղաքներն ու գիւղերը վերակառուցելու սրբազան գործը նկատեն ամէն բանէ վեր պարտականութիւն, և աշխատանքի լծուին բարձր գիտակցութեամբ, նպատակասլացութեամբ ու կարգապահութեամբ:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Ս. Էջմիածին,
19 Դեկտեմբեր 1988 թ.